# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
# ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, ք. Ապարան, Բաղրամյան-26, Հեռ. (0252) 2-43-93
էլ. փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com, կայք՝ www.aparan.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**19 ՄԱՐՏԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ N 13-Ա**

## ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով, հիմք ընդունելով ավագանու անդամների քվեարկության արդյունքները.

Ապարան համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի ավագանու՝ 19.03.2020 թվականի նիստի օրակարգը /կցվում է/:

Ավագանի՝ (կողմ - 10) (դեմ - 0) (ձեռնպահ - 0)

Գեղամյան Խաչիկ
Երեմյան Աղվան
Կարապետյան Արտյոմ
Կարապետյան Ռադիկ
Կարապետյան Էդգար
Մակարյան Վահան
Շահբազյան Հովհաննես
Պետրոսյան Արա
Տոնոյան Մուշեղ
Փարվանյան Արթուր

Համայնքի ղեկավար՝ Կ. Եղիազարյան

ՕՐԱԿԱՐԳ

ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 19.03.2020 ԹՎԱԿԱՆԻ ՆԻՍՏԻ ԺԱՄԸ՝ 15:00

1. ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի ավագանու նիստի օրակարգը հաստատելու մասին:
/զեկ. Գ.Աբրահամյան/
2. Ապարան համայնքի ղեկավարի հաշվետվությունը՝ համայնքի 2019 թվականի բյուջեի և տարեկան աշխատանքային պլանի /ՏԱՊ/ կատարման մասին:
/զեկ. Գ.Աբրահամյան/
3. <<Ապարան համայնքի Արագածի առողջության կենտրոն>>, <<Ապարան համայնքի Շենավանի բժշկական ամբուլատորիա>> և <<Ապարան համայնքի Քուչակի բժշկական ամբուլատորիա>> ՀՈԱԿ-ների 2020թ. բյուջեները հաստատելու մասին:
/զեկ. Գ.Աբրահամյան/
4. <<Ապարան համայնքի Արագածի առողջության կենտրոն>>, <<Ապարան համայնքի Շենավանի բժշկական ամբուլատորիա>> և <<Ապարան համայնքի Քուչակի բժշկական ամբուլատորիա>> ՀՈԱԿ-ների աշխատակազմերի 2020թ. թվաքանակները, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:
/զեկ. Գ.Աբրահամյան/
5. Ապարան համայնքի 2020թ. տարեկան աշխատանքային պլանում /ՏԱՊ/ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:
/զեկ. Գ.Աբրահամյան/
6. Ապարան համայնքի 2020թ. բյուջեի եկամուտների եվ ծախսերի մասերում ավելացումներ կատարելու, բյուջեի պահուստային ֆոնդից մասնակի բաշխում կատարելու եվ <<Ապարան համայնքի 2020թ. բյուջեն հաստատելու մասին>> Ապարան համայնքի ավագանու 24.12.2019թ. N 75-Ն որոշման մեջ լրացումներ եվ փոփոխություններ կատարելու մասին:
/զեկ. Մ.Ալեքսանյան/
7. Ապարան համայնքի ավագանու՝ 23.01.2020թ. <Ապարան համայնքի ղեկավարի սոցիալական պաշտպանության բնագավառում կամավոր /սեփական/ լիազորությունների իրականացման կարգը> հաստատելու մասին N03-Ա որոշման հավելվածում փոփոխություն և լրացում կատարելու մասին:
/զեկ. Գ.Երեմյան/
8. Ապարան համայնքի Վարդենուտ գյուղի բնակիչ Վահան Հակոբյանի ընտանիքին համայնքային սեփականություն հանդիսացող գույք նվիրաբերելու մասին:
/զեկ. Ա. Կարապետյան/
9. Ապարան համայնքի մի խումբ բնակիչների հարկային արտոնություններ տրամադրելու մասին:
/զեկ. Ն. Սիրեկանյան/
10. ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Ափնագյուղ գյուղի վարչական տարածքում գտնվող քաղաքացու սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության խոտհարքի նպատակային նշանակությունը փոխելուն հավանություն տալու մասին:
/զեկ. Վ.Սուքիասյան/
11. ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Շողակն գյուղի վարչական տարածքում գտնվող քաղաքացիների սեփականությունը հանդիսացող հողատարածքների նպատակային նշանակությունը փոխելու մասին:
/զեկ. Վ.Սուքիասյան/
12. ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Շողակն գյուղի վարչական տարածքում գտնվող քաղաքացիների սեփականությունը հանդիսացող հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:
/զեկ. Վ.Սուքիասյան/
13. ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Քուչակ գյուղի վարչական տարածքում գտնվող քաղաքացու սեփականությունը հանդիսացող հողատարածքների նպատակային նշանակությունը փոխելու մասին:
/զեկ. Վ.Սուքիասյան/
14. ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Եղիպատրուշ գյուղի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:
/զեկ. Վ.Սուքիասյան/

15. Ապարան համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասերը վաճակալության տրամադրելու թույլտվություն տալու մասին:
/զեկ. Վ.Սուքիասյան/
16. ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Եղիպատրուշ գյուղի վարչական տարածքում գտնվող քաղաքացիների սեփականությունը հանդիսացող հողամասերի նպատակային նշանակությունը փոխելուն համաձայնություն տալու մասին:
/զեկ. Վ.Սուքիասյան/
17. ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Եղիպատրուշ գյուղի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն հանդիսացող հողամասերի նպատակային նշանակությունը փոխելուն համաձայնություն տալու մասին:
/զեկ. Վ.Սուքիասյան/
18. ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Շողակն գյուղի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն հանդիսացող հողամասի նպատակային նշանակությունը փոխելուն համաձայնություն տալու մասին:
/զեկ. Վ.Սուքիասյան/
19. Ապարան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերն աճուրդ վաճառքի միջոցով օտարելու թույլտվություն տալու մասին:
/զեկ. Վ.Սուքիասյան/
20. ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Վարդենուտ գյուղի վարչական տարածքում գտնվող քաղաքացու սեփականություն հանդիսացող հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:
/զեկ. Վ.Սուքիասյան/
21. Ապարանի համայնքապետարանի համաֆինանսավորմամբ Եվրոպական միության կողմից իրականացվող «Քաղաքացիների ձայնն ու գործունեությունը հայաստանի խոշորացված համայնքներում» ծրագրի շրջանակներում հայտարարված դրամաշնորհային մրցույթի մասին:
/զեկ. Հ.Մկրտչյան/
22. <<Լավագույն գործելակերպի ծրագիր Հայաստանի խոշորացված համայնքների համար>> 2019թ. հայտարարված դրամաշնորհային ծրագրի մասին:
/զեկ. Հ.Մկրտչյան/
23. ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Ապարան քաղաքի քարտեզագրման աշխատանքների ընթացքում քաղաքացու անվամբ հաշվառված բնակելի կառուցապատման հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին:
/զեկ. Վ.Սուքիասյան/

Աշխատակազմի քարտուղար՝ Գ. Երեմյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
# Ա Պ Ա Ր Ա Ն  Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի  Ա Վ Ա Գ Ա Ն Ի

ՀՀ Արագածոտնի մարզ, ք. Ապարան, Բաղրամյան-26, Հեռ. (0252) 2-43-93
Էլ. փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com, կայք՝ www.aparan.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**19 ՄԱՐՏԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ N 14-Ա**

**ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 Թ. ԲՅՈՒՋԵԻ ԵՎ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ /ՏԱՊ/ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, <<Բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի պահանջներով.

Ապարան համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Ապարան համայնքի 2019թ. բյուջեի կատարման հաշվետվությունը՝ համաձայն N 1 հավելվածի:
2. Հաստատել Ապարան համայնքի 2019թ. տարեկան աշխատանքային պլանի /ՏԱՊ/ կատարման հաշվետվությունը՝ համաձայն N 2 հավելվածի:
3. Համայնքի ղեկավար պարոն Կ. Եղիազարյանին՝

ա) ակտիվացնել աշխատանքները՝ հողի և գույքի հարկերի բազաների ճշգրտման, տեղական հարկերի, տուրքերի և վարձավճարների հավաքագրման ուղղությամբ:
բ) հետևողական աշխատանքներ ծավալել և վարչական միջոցներ ձեռնարկել տեղական հարկերի, տուրքերի և վարձավճարների վճարումից խուսափողների նկատմամբ, նվազագույնի հասցնել ապառքները:
Այդ աշխատանքներում ապահովել անհրաժեշտ հրապարակայնություն ու թափանցիկություն:
գ) անհրաժեշտ քայլեր ձեռնարկել համայնքի ֆոնդային բյուջեի կատարման ուղղությամբ:
Ապահովել համայնքի զարգացման և տարեկան աշխատանքային պլանով նախատեսված աշխատանքների ամբողջական իրականացումը:
դ) բարձրացնել աշխատակազմի և բնակավայրերի վարչական ղեկավարների պատասխանատվությունը՝ համայնքի 2020թ. բյուջեի սեփական եկամուտների հավաքագրման պլանի կատարման, բյուջետային միջոցների արդյունավետ և նպատակային ծախսման ուղղությամբ:

Ավագանի՝ (կողմ - 10) (դեմ - 0) (ձեռնպահ - 0)

Գեղամյան Խաչիկ
Երեմյան Աղվան
Կարապետյան Արտյոմ
Կարապետյան Ռադիկ
Կարապետյան Էդգար
Մակարյան Վահան
Շահբազյան Հովհաննես
Պետրոսյան Արա
Տոնոյան Մուշեղ
Փարվանյան Արթուր

Համայնքի ղեկավար՝ Կ. Եղիազարյան

ՀԱՎԵԼՎԱԾ N 1

# ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 Թ. ԲՅՈՒՋԵԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ապարան համայնքի 2019թ. գործունեությունը նպատակաուղղված է եղել համայնքի 2019թ. բյուջեի կատարումն ապահովելու և դրա շնորհիվ համայնքի կենսագործունեության բոլոր ուղղությունների բնականոն գործունեությունն ու բնակավայրերում առկա առաջնային խնդիրների լուծմանը:
Ապահովվել է կատարված աշխատանքների թափանցիկությունն ու հրապարակայնությունը՝ համայնքային կայքի, սոց. ցանցերի միջոցով:
Ավագանու որոշումները, համայնքապետի որոշումներն ու կարգադրությունները, համայնքի բյուջեն, բյուջեի կատարողականները, համայնքապետարանի գործունեության հիմնական ուղղություններն մշտապես լուսաբանվել են համայնքային կայքում, որը հասու է եղել համայնքի բոլոր բնակիչներին:
2019թ. ընթացքում կայացել է ավագանու 8 նիստ, ընդունվել են 82 որոշումներ:
Ընդունվել են համայնքապետի 575 որոշումներ, 208 կարգադրություններ:
Տարվա ընթացքում հետևողական աշխատանքներ են տարվել հողի և գույքի շտեմարանների ճշգրտման, համայնքային եկամուտների հաշվարկային ցուցանիշների ճիշտ արտահայտման և այդ ուղղությամբ բնակիչների դժգոհությունները նվազագույնի հասցնելու գործում:
Դրա շնորհիվ շտեմարանները դարձել են ավելի կառավարելի և վերահսկելի, ճշգրտման աշխատանքերը շարունակվում են:
Օրեցօր նկատելի են պարտաճանաչ հարկատուների թվաքանակի աճման միտումներ:
Սեփական եկամուտների հավաքագրման գործում տարվում են ամենօրյա օպերատիվ հաշվառում և վերլուծություն, բացատրական և նախազգուշական աշխատանքներ:
2019թ. վարչական բյուջեն կատարվել է 102,7 %-ով:

### Համայնքի 2019թ. բյուջեի ձևավորման աղբյուրները և կատարված ցուցանիշները՝

| Եկամտատեսակներ | Պլան /հազ. դրամ/ | Կատարված | Կատ. % |
|---|---|---|---|
| ՀՀ կառավարության կողմից տրված դոտացիա | 483.582.800 | 483.582.800 | 100,0 |
| ՔԿԱԳ բաժնի պահպանման ծախսեր | 5.548.900 | 5.548.900 | 100,0 |
| Արվեստի դպրոցին տրված սուբվենցիա | 4.200.700 | 4.200.700 | 100,0 |
| Համայնքի սեփական եկամուտներ | 225.500.000 | 244.695.400 | 108,5 |
| Ընդամենը վարչական բյուջեն՝ | 718.832.400 | 738.027.800 | 102,7 |
| Ֆոնդային բյուջեի նախատեսված մուտքեր | 82.000.000 | 30.807.500 | 38,5 |

### 2019թ. բյուջեի սեփական եկամուտների կատարումն ըստ եկամտատեսակների

| N | ԵԿԱՄՏԱՏԵՍԱԿՆԵՐ | Պլան /հազ. դրամ/ | Կատարված | Կատ. % |
|---|---|---|---|---|
| 1 | Հողի հարկ | 60.100.000 | 59.798.800 | 99,5 |
| 2 | Հողի և գույքի վարձավճար | 18.709.000 | 17.536.400 | 93,7 |
| 3 | Գույքահարկ | 81.600.000 | 107.255.700 | 131,4 |
| 4 | Տուրքեր և վճարներ | 36.100.100 | 37.403.600 | 103,6 |
| 5 | Վարձավճարներ /աղբահանության և խմելու ջրի/ | 29.000.000 | 22.700.800 | 78,3 |
| Ընդամենը վարչական բյուջե՝ | | 225.509.100 | 244.695.300 | 108,5 |
| Կապիտալ գործառույթներից մուտքեր՝ | | 82.000.000 | 30.897.500 | 38,5 |

Համայնքի բյուջեի սեփական եկամուտների ուղղություններից հիմնականում թերակատարվել են հողի և գույքի վարձակալության վճարները՝ 6,3 %-ով, աղբահանության և խմելու ջրի վարձավճարները՝ 21,7- ով:
Աղբահանության վարձավճարների մասով՝ Ապարան քաղաքում պլանավորված 12.000,0 հազար դրամի դիմաց գանձվել է 12.081,8 հազար դրամ, կամ պլանը կատարվել է 100,7 %, իսկ գյուղական 20 բնակավայրերում՝ ընդամենը 8.800,0 հազար դրամի դիմաց գանձվել է 5.127,0 հազ. դրամ, կամ պլանը կատարվել է՝ 58,3 %:
Աղբահանության վարձավճարների գանձման ցուցանիշն անբավարար է Եղիպատրուշ, Վարդենիս, Չքնաղ, Թթուջուր, Լուսագյուղ, Քուչակ, Արայի, Կայք, Արագած գյուղերում:
Հարկերի հավաքագրման աշխատանքներն ավելի պատշաճորեն կատարելու, ապառքները նվազագույնի հասցնելու գործում առկա են մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներ:
Դեռևս մեծ թիվ են կազմում մահացած հարկատուների ժառանգություն չբացողները, բնակավայրից երկար տարիներ բացակայողները, որոնց ապառքները կազմում են ընդհանուր ապառքների 20-25%:
Դեռևս քիչ չեն նաև տարբեր պատճառաբանություններով հարկերի վճարումից անհարկի խուսափողները:
Վերլուծությունը փաստում է, որ հարկատուների շուրջ 25-30 %-ն անպատասխանատու վերաբերմունք են դրսևորում տեղական հարկերի, տուրքերի և վճարների ժամանակին վճարման գործում, նրանց մոտ բացակայում է համայնքի նկատմամբ պատասխանատվության և քաղաքացիական պարտքի զգացումը, իսկ համայնքապետարանի կողմից նրանց նկատմամբ ցուցաբերվում է հանդուրժողականություն, չի կիրառվում օրենքով սահմանված վարչական միջոցներ:
Թեև ժամանակին բոլորը գրավոր ծանուցվել են, ընթացքում բազմիցս բանավոր և գրավոր նախազգուշացվել են, սակայն խնդիրը շարունակում է մնալ մտահոգիչ:
Սեփական եկամուտների հավաքագրման ցածր ցուցանիշներ են ունեցել՝ Չքնաղ (89 %), Վարդենիս(90,5%), Ջրամբար (94,8%), Թթուջուր (95,7%), Ծաղկաշեն (97,7%) վարչական տարածքները:
Խնդիրներ կան տեղական տուրքերի և վճարների ժամանակին հավաքագրման գործում:
Տնտեսվարող սուբյեկտն առանց համայնքապետի որոշման իրավունք չունի օրենքով սահմանված գործունեություն ծավալել, հակառակ պարագայում այն համարվում է ապօրինի:
Չնայած տեղական տուրքերի և վճարների պլանը կատարվել է 103, 6 %, սակայն խնդիրը վերաբերվում է թույլտվությունների ժամանակին ստացմանը:
Կարգապահ հարկատուներին խրախուսելու և օրինակ ծառայեցնելու նպատակով շուրջ 211 հարկատուների՝ 6.670.176 դրամի չափով, տրամադրվել են հարկային արտոնություններ:
Դեռևս մեծ թիվ են կազմում ապառքները.
01.01.2020թ. դրությամբ հողի հարկի ապառքները կազմել են՝
Ֆիզիկական անձանց՝ 108.529.000 դրամ, տույժերը՝ 86.269.000 դրամ, ընդամենը՝ 194.798.000 դրամ
Իրավաբանական անձանց՝ 529.200 դրամ, տույժերը՝ 555.800 դրամ, ընդամենը՝ 1.085.000 դրամ
Գույքահարկի գծով՝
Ֆիզիակական անձանց՝ 67.072.000 դրամ, տույժերը՝ 23.474.800 դրամ, ընդամենը՝ 90.546.800 դրամ
Իրավաբանական անձանց՝ 3.180.500 դրամ, տույժերը՝ 7.078.500 դրամ, ընդամենը՝ 10.259.000 դրամ
500.000 դրամը գերազանցող պարտքեր ունեն 23 ֆիզիակական և 6 իրավաբանական անձիք:
Ֆոնդային բյուջեի մասով մուտքերի պլանը կատարվել է 38,5 % -ով:
Մուտքերի ապահովման թերակատարման պատճառները տարբեր են՝
Խոշորացման պարագայում հիմնական միջոցների օտարման վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրման և քննարկման ժամանակային առումով իրավիճակի դեռևս թերի տիրապետումը:
Հողամասը սեփականության իրավունքով անհատույց տիրապետող սեփականատիրոջ փոփոխության դեպքում հողի կադաստրային արժեքի գանձվող ամբողջ գումարը ՀՀ պետբյուջե փոխանցելու հանգամանքը:
Չնայած ֆոնդային բյուջեի մուտքերի թերակատարմանը, հսկայածավալ աշխատանքներ են կատարվել Ապարան քաղաքում և 20 գյուղական բնակավայրերում:
Համայնքի զարգացման հնգամյա ծրագրի շրջանակներում 2019թ. իրականացված ծրագրերն ըստ բնակավայրերի կից ներկայացված է հավելված 2-ում:

## 2019Թ. ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

| N | Հոդվածի անվանումը | ՊԼԱՆ Հազ.դրամ | ԿԱՏԱՐՎԱԾ Հազ.դրամ | ԿԱՏԱՐՄԱՆ % |
|---|---|---|---|---|
| | ԸՆԴՀԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ՝ | *805701.4* | *721519.4* | *89.6%* |
| 1 | Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների մասով՝ | 362053.5 | 325573.7 | 89.9% |
| | Որից՝ | | | |
| - | Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում | 217107.5 | 209620.2 | 96.6% |
| - | Հիմնական խմբին չդասվող պարտքային պարտավորություններ | 60884.8 | 49280.4 | 80.9% |
| - | Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ | 78208.5 | 61052.2 | 78.1% |
| - | ՔԿԱԳ բաժնի պահպանում | 5852.7 | 5620.9 | 96.0% |
| 2 | Տնտեսական հարաբերություններ | 24550.0 | 17140.1 | 69.8% |
| | Որից՝ | | | |
| | ճանապարհային տրանսպորտ | 24550.0 | 17140.1 | 69.8% |
| 3 | Շրջակա միջավայրի պաշտպանություն, այդ թվում | 10984.2 | 5002.2 | 45.5% |
| - | աղբահանում | 10984.2 | 5002.2 | 45.5% |
| 4 | Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն | *218098.7* | *194045.1* | 89.0% |
| | Որից՝ | | | |
| - | Բնակարանային շինարարություն | 15690.0 | 15010.8 | 95.7% |
| - | Ջրամատակարարում և կոյուղի | 17950.0 | 3995.4 | 22.3% |
| - | Բնակ.շինարարություն և կոմունալ ծառայություն | 142318.7 | 134239.7 | 94.3% |
| - | Արտաքին լուսավորություն | 42140.0 | 40799.2 | 96.8% |
| 5 | Հանգիստ, մշակույթ և կրոն բնագավառի մասով | *23400.0* | *23277.3* | 99.5% |
| | Որից՝ | | | |
| - | Գրադարանի մասով | 6180.0 | 6178.3.0 | 100.0% |
| - | Մշակույթի մասով | 17220.0 | 17099.0 | 99.3% |
| 6 | Կրթության բնագավառի մասով՝ | *153405.0* | *143476.2* | *93.5%* |
| | Որից՝ | | | |
| - | Նախադպրոցական կրթության բնագավառի մասով՝ | 78153.0 | 72165.0 | 92.3% |
| - | Արտադպրոցական դաստիարակության բնագավառի մասով | 75252.0 | 71311.2 | 94.8% |
| 7 | Սոցիալական պաշտպանություն | 13210.0 | 13004.8 | 98.5% |
| | Որից՝ | | | |
| - | Սոցիալական հատուկ արտոնություններ | 13210.0 | 13004.8 | 98.5% |
| 8 | Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդ | - | - | - |
| - | Որից՝ | | | |
| - | Համայնքի պահուստային ֆոնդ | - | - | - |

Աշխատանքներ են տարվել սոցիալապես անապահով ընտանիքներին և խմբերին օգնություն և աջակցություն ցուցաբերելու, սոցիալական լարվածությունը հնարավորինս մեղմելու ուղղությամբ:
Դրամական աջակցություն են ցուցաբերվել սոցիալապես անապահով ընտանիքների, բուժման կարիք ունեցող քաղաքացիների, ուսանողների, հուղարկավորության նպատակով՝ 5.000.000 դրամի չափով՝ 121 մարդու:
Վարձավճարների զեղջման արտոնություններ են կիրառվել մանկապարտեզներում և արվեստի դպրոցներում՝ ծնողազուրկ և բազմազավակ ընտանիքիների երեխաների համար:
Մարզադպրոցներում և մշակույթի կենտրոնում շուրջ 500 երեխաներ ստանում են անվճար ուսուցում:
Համայնքային ենթակայության հանդիսասրահներն իրենց կոմունիկացիաներով /սպասք, գազ, էլ. էներգիա/ անվճար տրամադրվել են բնակիչներին՝ սգո և այլ արարողությունների կատարման նպատակով:
Անցկացվել են բազմաթիվ համայնքային միջոցառումներ, որոնք նպաստել են բնակչության հանգստի, ազատ ժամանցի կազմակերպմանը, երեխաների գեղագիտական և սպորտային դաստիարակությանը:
Ավանդույթ է դարձել քարի միջազգային սիմպոզիումը, որին 2019թ. մասնակցեցին աշխարհի 16 երկրների 21 քանդակագործներ, որի արդյունքում համայնքին նվիրվեցին 21 հոյակերտ քանդակներ:
Ավանդույթ են դարձել՝ Բանակի օր, Ապարանյան ձմեռ, Մայրության տոն, Հաղթանակի տոն, Ապարանի

Հերոսամարտի տարելից, երեխաների միջազգային օր, ջրի տոն, ուսուցչի տոն, դպրության տոն միջոցառումները, բազմաթիվ համերգներ, փառատոններ, սպորտային տարբեր առաջնություններ: Հաղթողներին հանձնվել են նվերներ, դիպլոմներ, գավաթներ և դրամական պարգևներ:

Ֆոնդային բյուջեի մասով մուտքերի պլանը կատարվել է 38,5 % -ով:

Մուտքերի ապահովման թերակատարման պատճառները տարբեր են՝

Խոշորացման պարագայում հիմնական միջոցների օտարման վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրման և քննարկման ժամանակային առումով իրավիճակի դեռևս թերի տիրապետումը:

Հողամասը սեփականության իրավունքով անհատույց տիրապետող սեփականատիրոջ փոփոխության դեպքում հողի կադաստրային արժեքի գանձվող ամբողջ գումարը ՀՀ պետբյուջե փոխանցելու հանգամանքը, որը վերջերս արդեն կարգավորվել է:

Չնայած Ֆոնդային բյուջեի մուտքերի թերակատարմանը, հսկայածավալ աշխատանքներ են կատարվել Ապարան քաղաքում և 20 գյուղական բնակավայրերում:

Համայնքի զարգացման հնգամյա ծրագրի շրջանակներում 2019 թ իրականացված ծրագրերն ըստ բնակավայրերի կից ներկայացված է հավելված 2-ում:

Գնահատելով կատարված աշխատանքներն ու առաջիկա անելիքները, հաղթահարելով առկա պրոբլեմներն ու դժվարությունները, խնդիր է դրվում պահպանելու ձեռքբերումները և անելու հնարավոր առավելագույնը ապահովելու բոլոր բնակավայրերի բավարար կենսագործունեությունը, կայուն և հետևողական զարգացումը:

Համայնքապետարանի գործունեության ապահովման և արդյունավետության բարձրացման գործում արդյունավետ է եղել ավագանու գործնական և համերաշխ աշխատանքը, խնդիրները համատեղ ուժերով հաղթահարելու հետևողականությունը, կամքն ու վճռականությունը:

# ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2019Թ. ԲՅՈՒՋԵԻ ՍԵՓԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄ

30 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019Թ.

| N | Բնակավ. անվանում | ՀՈՂԻ ՀԱՐԿ | | | ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿ | | | ՀՈՂԻ ԵՎ ԳՈՒՅՔ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ | | | ՏՈՒՐՔԵՐ ԵՎ ՎՃԱՐՆԵՐ | | | ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐ ԱՂԲԻ ԵՎ ՋՐԻ | | | ԸՆԴԱՄԵՆԸ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ | | | ԸՆԴԱՄԵՆԸ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | ՊԼԱՆ | ԿԱՏԱՐ ՎԱԾ | % | ՊԼԱՆ | ԿԱՏԱՐ ՎԱԾ | % | ՊԼԱՆ | ԿԱՏԱՐ ՎԱԾ | % | ՊԼԱՆ | ԿԱՏԱՐ ՎԱԾ | % | ՊԼԱՆ | ԿԱՏԱՐ ՎԱԾ | % | ՊԼԱՆ | ԿԱՏԱՐՎ ԱԾ | % | ՊԼԱՆ | ՀՈՂԻ ՕՏԱՐ | ԳՈՒՅ ՔԻ ՕՏԱՐ | % |
| 1 | ԱՊԱՐԱՆ | 9000 | 7380.90 | 82 | 27200 | 36475.41 | 134.1 | 3200 | 2265.7 | 70.80 | 22890 | 25135.4 | 109.8 | 12000 | 12081.8 | 100.7 | 74290 | 83339.2 | 112.18 | 12000 | 9784.6 | | 81.5 |
| 2 | Արագած | 5000 | 4042.8 | 81 | 13600 | 14482.82 | 106.5 | 3000 | 3204.5 | 106.82 | 8826 | 8488.4 | 96.2 | 4500 | 2715.1 | 60.3 | 34926 | 32933.6 | 94.30 | 10000 | 1699.2 | | 17.0 |
| 3 | Արայի | 1300 | 1309.2 | 101 | 1450 | 2296.675 | 158.4 | 480 | 570.6 | 118.88 | 33 | 224.0 | 678.8 | 500 | 178.7 | 35.7 | 3763 | 4579.3 | 121.69 | | | | |
| 4 | Ափնագյուղ | 2900 | 3115.3 | 107 | 2600 | 3190.969 | 122.7 | 480 | 501.5 | 104.48 | 817 | 698.0 | 85.4 | 700 | 625.4 | 89.3 | 7497 | 8131.2 | 108.46 | 17000 | 2226 | | 13.1 |
| 5 | Երնջատափ | 3100 | 3113.94 | 100 | 1500 | 1802.791 | 120.2 | 500 | 582.7 | 116.54 | 65 | 61.5 | 94.6 | 650 | 648.7 | 99.8 | 5815 | 6209.6 | 106.79 | 5500 | 7.9 | | 0.1 |
| 6 | Եղիպատ | 2600 | 4680.2 | 180 | 1200 | 2199.25 | 183.3 | 630 | 510.8 | 81.08 | 59 | 849.9 | 1440.5 | 650 | 33.5 | 5.2 | 5139 | 8273.6 | 161.0 | 500 | 1410.4 | | 282. |
| 7 | Վարդենուտ | 3100 | 3349.7 | 108 | 2400 | 3356.576 | 139.9 | 420 | 572.1 | 136.21 | 969 | 338.0 | 34.9 | 1050 | 1050.5 | 100.0 | 7939 | 8666.8 | 109.17 | 18000 | 6067.3 | | 33.7 |
| 8 | Վարդենիս | 3300 | 2982.2 | 90 | 2900 | 3081.812 | 106.3 | 700 | 497.8 | 71.11 | 43 | 42.0 | 97.7 | 550 | 175.0 | 31.8 | 7493 | 6778.8 | 90.47 | 1000 | | | 0 |
| 9 | Հարթավան | 4300 | 4891.8 | 114 | 2900 | 4169.06 | 143.8 | 720 | 833.3 | 115.73 | 705 | 527.6 | 74.8 | 2000 | 2071.7 | 103.6 | 10625 | 12493.4 | 117.58 | | | | |
| 10 | Ջրամբար | 650 | 531.8 | 82 | 730 | 620.436 | 85.0 | 70 | 251.0 | 358.57 | 52 | 36.0 | 69.2 | 150 | 127.2 | 84.8 | 1652 | 1566.5 | 94.82 | | | | |
| 11 | Ծաղկաշեն | 2100 | 2109.72 | 100 | 3100 | 3004.62 | 96.9 | 300 | 250.3 | 83.44 | 27 | 22.0 | 81.5 | 550 | 551.8 | 100.3 | 6077 | 5938.4 | 97.72 | | | | |
| 12 | Ձորագլուխ | 1000 | 988.8 | 99 | 700 | 933.359 | 133.3 | 1190 | 1114.2 | 93.63 | 0.1 | | 0 | 100 | | 0 | 2990.1 | 3036.3 | 101.55 | | | | |
| 13 | Թթուջուր | 2050 | 1980.8 | 97 | 700 | 863.306 | 123.3 | 150 | 121.4 | 80.93 | 14 | 14.0 | 100.0 | 250 | 46.9 | 18.8 | 3164 | 3026.4 | 95.65 | | | | |
| 14 | Չքնաղ | 1600 | 1529.2 | 96 | 750 | 1031.619 | 137.5 | 1120 | 1093.0 | 97.59 | 425 | | 0 | 250 | 37.0 | 14.8 | 4145 | 3690.8 | 89.04 | 500 | | | 0 |
| 15 | Կայք | 1500 | 1548.7 | 103 | 1800 | 3112.609 | 172.9 | 400 | 402.6 | 100.65 | 33 | 28.0 | 84.8 | 650 | 435.8 | 67.0 | 4383 | 5527.7 | 126.12 | 1 | 386.3 | | 386 |
| 16 | Նիգավան | 2900 | 2545.9 | 88 | 1230 | 2888.506 | 234.8 | 1100 | 967.9 | 87.99 | 49 | 55.0 | 112.2 | 600 | 258.0 | 43.0 | 5879 | 6715.3 | 114.22 | 2000 | | 637.6 | 31.9 |
| 17 | Լուսագյուղ | 2600 | 2574.8 | 99 | 1200 | 2410.958 | 200.9 | 220 | 227.8 | 103.55 | 85 | 179.9 | 211.6 | 700 | 129.2 | 18.5 | 4805 | 5522.6 | 114.94 | | | | |
| 18 | Շենավան | 4000 | 3677.3 | 92 | 6500 | 8456.94 | 130.1 | 1779 | 1285.6 | 72.26 | 115 | 56.0 | 48.7 | 1200 | 993.5 | 82.8 | 13594 | 14469.3 | 106.44 | 1000 | 786.4 | | 78.6 |
| 19 | Սարալանջ | 750 | 940.4 | 125 | 730 | 848.7 | 116.3 | 60 | 99.0 | 164.92 | 12 | 12.0 | 100.0 | 250 | 115.3 | 46.1 | 1802 | 2015.3 | 111.84 | 1000 | | | 0 |
| 20 | Քուչակ | 4800 | 4903.18 | 102 | 7700 | 10243.03 | 133.0 | 1650 | 1571.7 | 95.25 | 851 | 636.1 | 74.7 | 1500 | 314.3 | 21.0 | 16501 | 17668.3 | 107.07 | 12000 | 7628.5 | | 63.6 |
| 21 | Շողակն | 1550 | 1602.2 | 103 | 710 | 1786.261 | 251.6 | 540 | 613.0 | 113.52 | 30 | | 0 | 200 | 111.4 | 55.7 | 3030 | 4112.8 | 135.74 | 1500 | 901 | | 60.1 |
| | | 60100 | 59798.8 | 99 | 81600 | 107255.7 | 131.4 | 18709 | 17536.4 | 93.73 | 36100 | 37403.8 | 103.6 | 29000 | 22700.8 | 78.3 | 225509.1 | 244695.4 | 108.51 | 82001 | 30897.5 | 637.6 | 38.5 |

Աշխատակազմի քարտուղար՝ Գ.Երեմյան

ՀԱՎԵԼՎԱԾ 2

# ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2019Թ. ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ

**Բոլորի բնակավայրերի համար՝**
**Խմելաջրի համակարգի պահպանություն և շահագործում**
**Աղբահանության իրականացում**
**Գիշերային լուսավորության համակարգի պահպանություն և շահագործում**
**Ճանապարհների ձմեռային պահպանություն և շահագործում**

| Բնակավայրի անվանումը | Ծրագրի անվանումը | Ծավալ, քանակ | Արժեքը հազ.դրամ |
|---|---|---|---|
| Ապարան | Բաղրամյան 49 բնակելի շենքի տանիքի հիմնանորոգում | 600 քմ | 4.473,2 |
| | Գայի 7 բնակելի շենքի տանիքի հիմնանորոգում | 550 քմ | 3.357,6 |
| | Բաղրամյան 23 բ/շ տանիքի հիմնանորոգում | 500 քմ | 3.000,0 |
| | Բաղրամյան 46 բ/շ տանիքի հիմնանորոգում | 1530 քմ | 8.877,8 |
| | Բաղրամյան փողոցի բնակելի շենքերի շքապատշգամների վերանորոգում | 300 քմ | 4.155,0 |
| | Մ.Գևորգի և Մաշտոցի փողոցներում ասֆալտի փոսային նորոգումներ | 1263 քմ | 4.770,0 |
| | Պլաստմասե աղբամանների ձեռք բերում | 20 հատ | 1.698,0 |
| | Փոքր աղբարկղերի ձեռք բերում | 30 հատ | 730,0 |
| | Բնակելի շենքերի բակերում հանգստարանների տեղադրում | 2 կոմպլ. | 820,0 |
| | Բաղրամյան 17, 23 բնակ.շենքերի բակերում խաղահրապարակների կառուցում | 400 քմ | 1.900,0 |
| | Պ. Սևակի փողոցի սկզբնամասում ճեմուղու կառուցում, խաչքարի տեղադրում | 200 քմ | 1.685,0 |
| | Պ. Սևակ և Աբովյան փողոցների, Բաղրամյան 12,14, Մահուբու 2, Մաշտոցի 11 բակերի ասֆալտապատում | 5600 քմ | 13.640,0 |
| | Անասունների խմելաջրի համակարգի կառուցման համայնքի ներդրում | 3 խմոց | 2.350,0 |
| | Գիշերային լուսավորության անցկացում | 93 կետ | 7.200,0 |
| Արայի | Խաղասենյակի գույքի հատկացում՝ սեղան, աթոռ | | 136,0 |
| | Ճանապարհների հարթեցում գրեյդերով | 2 կմ | |
| | Կանալների և սելաֆատարի մաքրում | 500 մ | |
| | Գիշերային լուսավորության անցկացում | 30 կետ | 2.450,0 |
| | Խմելաջրի ջրագծի կառուցման ներդրում | 1200 մ | 1.300,0 |
| Արագած | Ճանապարհների հարթեցում գրեյդերով | 13 կմ | |
| | Կանալների և սելաֆատարի մաքրում | 900 մ | |
| | Մանկապարտեզի սանհանգույցի վերանորոգում | | 560,0 |
| | Կամուրջների վերակառուցում | 3 հատ | 3.000,0 |
| | Գիշերային լուսավորության անցկացում | 60 կետ | 4.900,0 |
| Ափնագյուղ | Հանդիսասրահի հիմնանորոգում | | 2.591,0 |
| | Գիշերային լուսավորության անցկացում | 30 կետ | 2.450,0 |
| | Ճանապարհների հարթեցում գրեյդերով | 5 կմ | |
| | Ոռոգման առուների և սելաֆատարի մաքրում | 500 մ | |
| | Հուշարձանում խմելաջրի անցկացում | 130 մ | |
| Եղիպատրուշ | Մարզասրահի վերանորոգում | | 1.800,0 |
| | Ոռոգման առուների և սելավատարի մաքրում | 1 կմ | |

| | | | |
|---|---|---|---|
| Երնջատափ | Բնակելի շենքերի մուտքերին դռների տեղադրում | 4 հատ | 400,0 |
| | Գիշերային լուսավորության անցկացում | 48 կետ | 3.300,0 |
| | Բնակելի շենքի տանիքի վերանորոգում | 1100 քմ | 6.950,0 |
| Թթուջուր | Ճանապարհների հարթեցում գրեյդերով | 1 կմ | |
| | Ջրատարների և սելաֆատարի մաքրում | 500 մ | |
| | Գիշերային լուսավորության անցկացում | 20 կետ | 1.650,0 |
| | Ճանապարհների գրավիլալիցք և բարեկարգում | 1 կմ | |
| Լուսագյուղ | Ճանապարհների բարեկարգում՝ ասֆալտի քերվածքով | 0,5 կմ | |
| | Գիշերային լուսավորության անցկացում | 50 կետ | 2.000,0 |
| Ծաղկաշեն | Հուշաղբյուրի հիմնանորոգում, տարածքի կառուցապատում | | 850,0 |
| | Ճանապարհների գրավիլալիցք և բարեկարգում | 1 կմ | |
| | Գիշերային լուսավորության անցկացում | 40 կետ | 3.250,0 |
| | Ճանապարհների հարթեցում՝ գրեյդերով | 3 կմ | |
| | Կանալների և սելաֆատարի մաքրում | 400 մ | |
| Հարթավան | Ճանապարհների հարթեցում գրեյդերով | 8 կմ | |
| | Գիշերային լուսավորության անցկացում | 30 կետ | 2.450,0 |
| | Ոռոգման առուների և սելաֆատարի մաքրում | 1 կմ | |
| Ձորագլուխ | Ճանապարհների հարթեցում գրեյդերով | 2 կմ | |
| | Գիշերային լուսավորության անցկացում | 20 կետ | 1.650,0 |
| | Կանալների և սելաֆատարի մաքրում | 1 կմ | |
| | Ճանապարհների գրավիլալիցք և բարեկարգում | 1 կմ | |
| | Դաշտամիջյան ճանապարհների հարթեցում | 3 կմ | |
| Նիգավան | Խմելու ջրագծի կառուցման ներդրում, նախագծերի պատվիրում | | 4.000,0 |
| | Ճանապարհների գրավիլալիցք և բարեկարգում | 1 կմ | |
| | Գիշերային լուսավորության անցկացում | 10 կետ | 900,0 |
| Շենավան | Էլ. հոսանքի գծերի հիմնանորոգում | | 500,0 |
| | Հանդիսասրահի նախամուտքի, խոհանոցի և սանհանգույցի նորոգում | | 2.100,0 |
| | Հանդիսասրահի գազաֆիկացում | | 514,0 |
| | Ներգյուղական ճանապարհների գրավիլալիցք և բարեկարգում | 3 կմ | |
| | Գիշերային լուսավորության անցկացում | 50 կետ | 4.100,0 |
| | Ոռոգման առուների և սելաֆատարների մաքրում | 1,3 կմ | |
| Շողակն | Գրասենյակային գույքի հատկացում | | 300,0 |
| | Գիշերային լուսավորության անցկացում | 40 կետ | 3.250,0 |
| | Խմելաջրի ջրագծի կառուցում | 500 գծմ | 968,0 |
| Սարալանջ | Վարչական ղեկավարի նստավայրի վերանորոգում | | 235,0 |
| | Կանալների և սելաֆատարի մաքրում | 1 կմ | |
| | Գիշերային լուսավորության անցկացում | 20 կետ | 1.620,0 |
| | Ճանապարհների գրավիլալիցք և բարեկարգում | 0,8 կմ | 600,0 |
| Վարդենիս | Ճանապարհների հարթեցում գրեյդերով | 2 կմ | |
| | Կանալների և սելաֆատարի մաքրում | 1,5 կմ | |

| | | | |
|---|---|---|---|
| Վարդենուտ | Խաղասենյակի գույքի հատկացում | | 140.000 |
| | Հանդիսասրահի խոհանոցի վերանորոգում | | 1.200,0 |
| | Հանդիսասրահի սանհանգույցների վերակառուցում | | 1.450,0 |
| | Ճանապարհների հարթեցում գրեյդերով | 8 կմ | |
| | Գիշերային լուսավորության անցկացում | 40 կետ | 3.250,0 |
| | Ոռոգման ջրագծի կառուցման համայնքի ներդրում | 1400 մ | 1.128,0 |
| | Անասունների խմելաջրի համակարգի կառուցում | | |
| Քուչակ | Ճանապարհների հարթեցում գրեյդերով | 8 կմ | |
| | Ասֆալտի քերվածքով ճանապարհների բարեկարգում | 0,7 կմ | |
| | Ճանապարհների գրավիլալիցք և բարեկարգում | 3 կմ | |
| | Կանալների և սելաֆատարի մաքրում | 1,2 կմ | |
| | Գիշերային լուսավորության անցկացում | 50 կետ | 4.100,0 |
| | Հուշարձանում և գերեզմանատանը խմելաջրի անցկացում | | 502,0 |
| | Հուշաղբյուրի տարածքի բարեկարգում | | 250,0 |
| | Մանկապարտեզի շենքի վերակառուցման համայնքի ներդրում | | 4.000,0 |
| Չքնաղ | Դաշտամիջյան ճանապարհների հարթեցում | 2 կմ | |
| | Խմելաջրի համակարգի վերակառուցում | | 800,0 |
| | Գիշերային լուսավորության անցկացում | 30 կետ | 2.450,0 |
| Կայք | Հանդիսասրահի խոհանոցի վերանորոգում, աստիճանավանդակի կառուցում | | 1.500,0 |
| | Ճանապարհի գրավիլալիցք և բարեկարգում | 3 կմ | |
| | Գիշերային լուսավորության անցկացում | 30 կետ | 2.450,0 |
| | Խմելաջրի ջրագծի կառուցում | 1 կմ | 2.947,0 |

# ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2019 Թ. ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

| N | Միջոցառումներ | Մասնակիցներ |
|---|---|---|
| 1 | Հայոց բանակի օրվան նվիրված հանդիսություն | Բոլոր բնակավայրերի ազատամարտիկերը |
| 2 | Ապարանյան ձմեռ | Մասնակցել են բոլոր բնակավայրերը |
| 3 | Մայրության տոնի միջոցառումներ Ապարանում և Արագածում | Տարածաշրջանի կանանց համար |
| 4 | Եղեռնի հիշատակման օր | Մասնակցել են բոլոր բնակավայրերը |
| 5 | Հաղթանակի օր | Բոլոր բնակավայրերում |
| 6 | Շրջանավարտների հավաք, վերջին զանգ | Բոլոր շրջանավարտներ |
| 7 | Բաշ-Ապարանի հերոսամարտի և Առաջին հանրապետության 101-ամյակներին նվիրված տոնակատարություն | Մասնակցել են բոլոր բնակավայրերը |
| 8 | Երեխաների միջազգային օրվան նվիրված միջոցառումներ | Բոլոր բնակավայրերում |
| 9 | Քանդակագործության միջազգային երկրորդ սիմպոզիում | 16 երկրների 21 քանդակագործներ |
| 10 | Ջրի փառատոն | Մասնակցել են բոլոր բնակավայրերից |
| 11 | Տոնական միջոցառում  նվիրված ուսուցչի օրվան | Մասնակցել են բոլոր բնակավայրերից |
| 12 | Ամանորյա միջոցառումներ | Բոլոր բնակավայրերում |
| 13 | Ցուցահանդեսներ՝ Արվեստի դպրոցի սաների և նկարիչ Նվեր Հայրապետյանի աշխատանքների | ք. Ապարան |
| 14 | Թատերական ներկայացումներ՝ Վանաձորի դրամատիկական, Երևանի ստվերների, Պարոնյանի անվան, Խամաճիկների թատրոնների կողմից՝ թվով 7 բեմադրություն | Ապարան քաղաք և գյուղեր |
| 15 | Կրկեսային ծրագիր մանկապարտեզների սաների համար | Ապարան, Արագած, Հարթավան, Լուսագյուղ |
| 16 | Հաշվետու համերգներ մշակույթի կենտրոնի և արվեստի դպրոցների համույթների մասնակցությամբ | Ապարան, Արագած |
| 17 | Մոմավառություն և հիշատակի ցերեկույթներ  նվիրված Շառլ Ազնավուրի հիշատակին | Դպրոցներում և մանկապարտեզներում |
| 18 | Մշտական ծրագրային միջոցառումներ գրադարանում | Ապարան, հրավիրվածներ գյուղերից |
| 19 | Մշտական ծրագրային միջոցառումներ մանկապարտեզներում | Ապարան, Արագած, Հարթավան, Լուսագյուղ |
| 20 | Մարզադպրոցներում ծրագրային առաջնություններ, մասնակցություն հանրապետական մրցումների | Ապարան, Քուչակ, Արագած, Շենավան |
| 21 | Սպորտլանդիայի առաջնություններ՝ դպրոցականների և մանկապարտեզների սաների | Մասնակցել են բոլոր բնակավայրերից |
| 22 | Լավագույն մարզական ընտանիք մրցույթ | Մասնակցել են բոլոր բնակավայրերից |
| 23 | Ֆուտբոլի համայնքային առաջնություն | Մասնակցել են 9 բնակավայրերի թիմեր |
| 24 | Մարզական խաղերի  փառատոն | Մասնակցել են բոլոր բնակավայրերից |

Աշխատակազմի քարտուղար՝ Գ.Երեմյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
# Ա Պ Ա Ր Ա Ն  Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի  Ա Վ Ա Գ Ա Ն Ի

ՀՀ Արագածոտնի մարզ, ք. Ապարան, Բաղրամյան-26, Հեռ. (0252) 2-43-93
էլ. փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com, կայք՝ www.aparan.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**19 ՄԱՐՏԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ N 15-Ա**

### <<ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԱԳԱԾԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ>>, <<ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԵՆԱՎԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ>> ԵՎ <<ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՔՈՒՉԱԿԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ>> ՀՈԱԿ-ՆԵՐԻ 2020Թ. ԲՅՈՒՋԵՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն ,,Տեղական ինքնակառավարման մասին,, ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի պահանջների, հիմք ընդունելով 2020թ. պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման ծրագրերի իրականացման ուղղությամբ ՀՀ առողջապահության նախարարության կողմից հատկացված պայմանագրային գումարների չափաքանակը.

Ապարան համայնքի ավագանին որոշում է՝

1.Հաստատել՝<<Ապարան համայնքի Արագածի առողջության կենտրոն>>, <<Ապարան համայնքի Քուչակի բժշկական ամբուլատորիա>>, <<Ապարան համայնքի Շենավանի բժշկական ամբուլատորիա>> ՀՈԱԿ-ների 2020թ. բյուջեները հետևյալ համամասնությամբ՝

1.1. <<Ապարան համայնքի Արագածի առողջության կենտրոն>> ՀՈԱԿ՝
- ա) Եկամուտների մասով՝ 38.371,9 հազ. ՀՀ դրամ
- բ) Ծախսերի մասով՝ 38.371,9 հազ. ՀՀ դրամ

1.2. <<Ապարան համայնքի Քուչակի բժշկական ամբուլատորիա>> ՀՈԱԿ՝
- ա) Եկամուտների մասով՝ 17.850,0 ՀՀ դրամ
- բ) Ծախսերի մասով՝ 17.850,0 ՀՀ դրամ

1.3. <<Ապարան համայնքի Շենավանի բժշկական ամբուլատորիա>> ՀՈԱԿ՝
- ա) Եկամուտների մասով՝ 27.662,9 ՀՀ դրամ
- բ) Ծախսերի մասով՝ 27.662,9 ՀՀ դրամ

Ավագանի՝ (կողմ - 10) (դեմ - 0) (ձեռնպահ - 0)

Գեղամյան Խաչիկ
Երեմյան Աղվան
Կարապետյան Արտյոմ
Կարապետյան Ռադիկ
Կարապետյան Էդգար
Մակարյան Վահան
Շահբազյան Հովհաննես
Պետրոսյան Արա
Տոնոյան Մուշեղ
Փարվանյան Արթուր

Համայնքի ղեկավար՝ Կ. Եղիազարյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ**
**Ա Պ Ա Ր Ա Ն Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի Ա Վ Ա Գ Ա Ն Ի**

ՀՀ Արագածոտնի մարզ, ք. Ապարան, Բաղրամյան-26, Հեռ. (0252) 2-43-93
Էլ. փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com, կայք՝ www.aparan.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**19 ՄԱՐՏԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ N 16-Ա**

## <<ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԱԳԱԾԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ>>, <<ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԵՆԱՎԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ>> ԵՎ <<ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՔՈՒՉԱԿԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ>> ՀՈԱԿ-ՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԵՐԻ 2020Թ. ԹՎԱՔԱՆԱԿՆԵՐԸ, ՀԱՍՏԻՔԱՅՈՒՑԱԿՆԵՐԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ, 35-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետերի, 47-րդ հոդվածի պահանջների, ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի դրույթներով, հիմք ընդունելով ՀՀ Առողջապահության նախարարի 24.07.2014թ. ,,Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով արտահիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում,, իրականացնող աշխատողների աշխատանքի նվազագույն վարձատրման վերաբերյալ N1791-Ա հրամանով հատատված ուղեցույցը.

Ապարան համայնքի ավագանին որոշում է՝

1.Հաստատել <<Ապարան համայնքի Արագածի առողջության կենտրոն>>, <<Ապարան համայնքի Շենավանի բժշկական ամբուլատորիա>> և <<Ապարան համայնքի Քուչակի բժշկական ամբուլատորիա>> ՀՈԱԿ-ների աշխատակիցների 2020թ. թվաքանակները, հաստիքային միավորները և պաշտոնային դրույքաչափերը, համաձայն՝ N 1, N 2 և N 3 հավելվածների:

Ավագանի՝ (կողմ - 10) (դեմ - 0) (ձեռնպահ - 0)

Գեղամյան Խաչիկ
Երեմյան Աղվան
Կարապետյան Արտյոմ
Կարապետյան Ռադիկ
Կարապետյան Էդգար
Մակարյան Վահան
Շահբազյան Հովհաննես
Պետրոսյան Արա
Տոնոյան Մուշեղ
Փարվանյան Արթուր

Համայնքի ղեկավար՝ Կ. Եղիազարյան

Հավելված N1

Հաստատված է

Ապարան համայնքի ավագանու՝

2020թ. մարտի 19-ի թիվ 16-Ա որոշմամբ

## <<Ապարան համայնքի Արագածի առողջության կենտրոն>> ՀՈԱԿ աշխատակիցների 2020թ. թվաքանակը, հաստիքային միավորները և պաշտոնային դրույքաչափերը

| N | Հաստիքի անվանումը | Աշխատ. թվաքա. | Հաստիք միավոր | Մեկ միավորի դրույքաչափը | Հաստիքա վճար | 20% լեռնային | Աշխատա վարձ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Առողջության կենտրոնի տնօրեն | 1 | 1 | 200000 | 200000 | 8000 | 208000 |
| 2 | Բժիշկ ստոմատոլոգ | - | 0.5 | 120000 | 60000 | - | 60000 |
| 3 | Տեղամ. ընտանեկան բժիշկ/բժ. թերապ | 1 | 1 | 406335 | 406335 | 8000 | 414335 |
| 4 | Տեղամ. ընտանեկան բժիշկ/բժ. մանկա. | 1 | 1 | 406335 | 406335 | 8000 | 414335 |
| 5 | Բժիշկ գինեկոլոգ /1697*28+20*1900/1863 | 1 | 0,55 | 120000 | 66000 | 8000 | 74000 |
| 6 | Մանկական բուժքույր /630*120/ | 1 | 0,75 | 100800 | 75600 | 8000 | 83600 |
| 7 | Իմունոլոգիական կաբինետի բ/ք /912*12.5/ | - | 0,12 | 95000 | 11400 | - | 11400 |
| 8 | Լաբորանտ | 1 | 0,9 | 95000 | 85500 | 8000 | 93500 |
| 9 | Կ/կ մանկաբարձ /1697*34.33+20*700/ | 1 | 0,72 | 100800 | 72576 | 8000 | 80576 |
| 10 | Թերապևտիկ կաբինետի բուժքույր | 1 | 1 | 95000 | 95000 | 8000 | 103000 |
| 11 | Ծաղկաշենի ԲՄԿ-ի բուժքույր | 1 | 0,86 | 98900 | 85054 | 8000 | 93054 |
| 12 | Վարդենուտի ԲՄԿ-ի բուժքույր | 1 | 0,86 | 98900 | 85054 | 8000 | 93054 |
| 13 | Արայիի ԲՄԿ-ի բուժքույր | 1 | 0.65 | 98900 | 64285 | 8000 | 72285 |
| 14 | Սանիտար | 1 | 0,9 | 93000 | 83700 | 8000 | 91700 |
| 15 | Հաշվապահ | 1 | 1 | 160000 | 160000 | 8000 | 168000 |
| 16 | Տնտեսվար | 1 | 0,9 | 94000 | 84600 | 8000 | 92600 |
| 17 | Ծրագրի սպա. համակ. օպերատոր | 1 | 0,9 | 95000 | 85500 | 8000 | 93500 |
| 18 | Դպրոցական բուժքույր /171.4*587/ | 1 | 0,85 | 100612 | 85520 | 8000 | 93520 |
| Ընդամենը՝ | | 16 | 14,46 | | | 128.000 | 2.340.459 |

Աշխատակազմի քարտուղար՝ Գ.Երեմյան

Հավելված N2
Հաստատված է
Ապարան համայնքի ավագանու՝
2020թ. մարտի 19-ի թիվ 16-Ա որոշմամբ

<<Ապարան համայնքի Շենավանի բժշկական ամբուլատորիա>> ՀՈԱԿ աշխատակիցների 2020թ. թվաքանակը, հաստիքային միավորները և պաշտոնային դրույքաչափերը

| N | Հաստիքի անվանումը | Աշխատ. թվաքա. | Հաստիք. միավոր | Մեկ միավորի դրույքաչափը | Հաստիքավճար |
|---|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 0.5 | 200000 | 100000 |
| 2 | Ընտանեկան բժիշկ | | 1 | 420275 | 420275 |
| 3 | Ընտանեկան բժիշկ | 1 | 0,48 | 420275 | 201730 |
| 4 | Ընտանեկան բուժքույր | 1 | 1,05 | 110250 | 110250 |
| 5 | Ընտանեկան բուժքույր-լաբորանտ | 1 | 0,95 | 105000 | 99750 |
| 6 | Ընտանեկան բուժքույր | 1 | 0,73 | 105000 | 76650 |
| 7 | Դպրոցական բուժքույր /234x171,4/ | 1 | 0,42 | 95500 | 40110 |
| 8 | Մատենավար | | 0,38 | 95500 | 36290 |
| 9 | Բուժքույր մանկաբարձուհի | 1 | 0,8 | 95500 | 76400 |
| 10 | Ափնագյուղի ԲՄԿ-ի բուժքույր | 1 | 1 | 98900 | 98900 |
| 11 | Հարթավանի ԲՄԿ-ի բուժքույր | 1 | 0,78 | 98900 | 77142 |
| 12 | Շողակնի ԲՄԿ-ի բուժքույր | 1 | 1 | 98900 | 98900 |
| 13 | Երնջատափի ԲՄԿ-ի բուժքույր | 1 | 1 | 98900 | 98900 |
| 14 | Հաշվապահ | 1 | 0,9 | 140000 | 126000 |
| 15 | Օպերատոր | 1 | 1 | 93.000 | 93000 |
| 16 | Սանիտար | 1 | 0.75 | 92300 | 69225 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ՝ | 14 | 12,74 | | 1.823.522 |

Աշխատակազմի քարտուղար՝ Գ.Երեմյան

Հավելված N3
Հաստատված է
Ապարան համայնքի ավագանու՝
2020թ. մարտի 19-ի թիվ 16-Ա որոշմամբ

<<Ապարան համայնքի Քուչակի բժշկական ամբուլատորիա>> ՀՈԱԿ աշխատակիցների 2020թ. թվաքանակը, հաստիքային միավորները և պաշտոնային դրույքաչափերը

| N | Հաստիքի անվանումը | Աշխատ. թվաքա. | Հաստիք. միավորը | Մեկ միավորի դրույքաչափը | Հաստիքավճար |
|---|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 0.5 | 200000 | 100000 |
| 2 | Ընտանեկան բժիշկ | | 1 | 402200 | 402200 |
| 3 | Հաշվապահ | 1 | 1 | 140000 | 140000 |
| 4 | Օպերատոր | 1 | 1 | 100000 | 100000 |
| 5 | Ընտանեկան բուժքույր | 1 | 1 | 105000 | 105000 |
| 6 | Ընտանեկան բուժքույր | 1 | 0,9 | 105000 | 94500 |
| 7 | Դպրոցական բուժքույր /239 x 171,4/ | 1 | 0,43 | 95300 | 40979 |
| 8 | Ընտանեկան բուժքույր | | 0,32 | 95300 | 30496 |
| 9 | Սանիտար | 1 | 0.75 | 92300 | 69225 |
| 10 | Ջրամբարի ԲՄԿ-ի բուժքույր | 1 | 1 | 98900 | 98900 |
| 11 | Եղիպատրուշի ԲՄԿ-ի բուժքույր | 1 | 1 | 98900 | 98900 |
| Ընդամենը՝ | | 9 | 8,9 | | 1.280.200 |

Աշխատակազմի քարտուղար՝ Գ.Երեմյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
# Ա Պ Ա Ր Ա Ն  Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի  Ա Վ Ա Գ Ա Ն Ի

ՀՀ Արագածոտնի մարզ, ք. Ապարան, Բաղրամյան-26, Հեռ. (0252) 2-43-93
էլ. փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com, կայք՝ www.aparan.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**19 ՄԱՐՏԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ N 17-Ա**

**ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆՈՒՄ /ՏԱՊ/ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, 82-րդ հոդվածի պահանջներով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-34-րդ հոդվածների դրույթներով.

Ապարան համայնքի ավագանին որոշում է՝

1.Ապարան համայնքի զարգացման հնգամյա ծրագրի շրջանակներում իրականացվող 2020թ. տարեկան աշխատանքային պլանում /ՏԱՊ/ կատարել լրացումներ և փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

Ավագանի՝ (կողմ - 10) (դեմ - 0) (ձեռնպահ - 0)

Գեղամյան Խաչիկ
Երեմյան Աղվան
Կարապետյան Արտյոմ
Կարապետյան Ռադիկ
Կարապետյան Էդգար
Մակարյան Վահան
Շահբազյան Հովհաննես
Պետրոսյան Արա
Տոնոյան Մուշեղ
Փարվանյան Արթուր

Համայնքի ղեկավար՝ Կ. Եղիազարյան

ՀԱՎԵԼՎԱԾ

## ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020Թ. ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| N | ԾՐԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ | Բնակավայր | Ծավալ, քանակ | | Համայնքի ֆինանսավորումը հազ. դրամ | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | Նախա-տեսված | Փոփոխ-ված | Նախա-տեսված | Փոփոխ-ված |
| ՈԼՈՐՏ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | | | | | |
| 14 | Գույքի գնահատում և հանրային հաշվապահության ծրագրի ներդրում | | | | 0 | 4.000,0 |
| ՈԼՈՐՏ 4. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | | | | | |
| 10 | Ներհամայնքային ճանապարհների, բակային տարածքների ասֆալտապատում | 9 բնակավայր | 19500 քմ | 23780 քմ | 62.400,0 | 76.096,0 |
| | Այդ թվում՝ | | | | | |
| 10-1 | Ներքաղաքային ճանապարհներ, բակային տարածքներ | Ապարան | 7000 քմ | 10980 քմ | x | x |
| 10-2 | Ներգյուղական ճանապարհներ՝ | Արագած | 2500 քմ | | x | x |
| 10-3 | | Շենավան | 1600 քմ | | x | x |
| 10-4 | | Ծաղկաշեն | 2000 քմ | 2100 քմ | x | x |
| 10-5 | | Վարդենուտ | 2000 քմ | | x | x |
| 10-6 | | Հարթավան | 1000 քմ | | x | x |
| 10-7 | | Սարալանջ | 1200 քմ | | x | x |
| 10-8 | | Վարդենիս | 1000 քմ | 1200 քմ | x | x |
| 10-9 | | Կայք | 1200 քմ | | x | x |
| ՈԼՈՐՏ 5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ | | | | | | |
| 1-2 | Բաղրամյան փողոցի հնամյա և չորացած ծառերի փոխարինում արծաթափայլ եղևնիներով | Ապարան | | | 1.500,0 | 8.000,0 |
| ՈԼՈՐՏ 6. ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ | | | | | | |
| 2 | Գիշերային լուսավորության անցկացում | Ապարան | | | 4.000,0 | 0 |
| 15 | Դարյան 23 բնակելի շենքի շքապատշգամների վերանորոգում | Ապարան | | | 0 | 4.000,0 |
| ՈԼՈՐՏ 8. ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ, ՍՊՈՐՏ ԵՎ ԿՐՈՆ | | | | | | |
| 29 | Մարզադպրոցի գազաֆիկացում | Քուչակ | | | 0 | 530,0 |
| 30 | Մանկապարտեզի գազաֆիկացում | Քուչակ | | | 0 | 700,0 |
| ՈԼՈՐՏ 11. ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ | | | | | | |
| ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ՝ | | | | | | |
| 2 | Նիգավանի ջրագծի էլեկտրական համակարգի կառուցում | | | | | 2.000,0 |

Աշխատակազմի քարտուղար՝ Գ.Երեմյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
# Ա Պ Ա Ր Ա Ն  Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի  Ա Վ Ա Գ Ա Ն Ի

ՀՀ Արագածոտնի մարզ, ք. Ապարան, Բաղրամյան-26, Հեռ. (0252) 2-43-93
Էլ. փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com, կայք՝ www.aparan.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**19 ՄԱՐՏԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ N 18-Ա**

**ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՄԱՍԵՐՈՒՄ ԱՎԵԼԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ, ԲՅՈՒՋԵԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ՄԱՍՆԱԿԻ ԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ <<ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020Թ.ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ՝ 24.12.2019Թ. N 75-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 83-րդ հոդվածի, <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ կետի և <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>>ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի պահանջների, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2020թ. փետրվարի 20-ի N 191- Ն որոշումը՝ ՀՀ տեղական ինքնակառավարման մարմիններին պետական աջակցության նպատակով նախատեսված հատկացումները բաշխելու վերաբերյալ, Ապարան համայնքին 9300.0 հզ. դրամ ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհ տրամադրելու և <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի համաձայն պատվիրակված լիազորությունների իրականացման նպատակով 2019թ. դեկտեմբերի 26-ի թիվ 1919-Ն որոշման համաձայն, Ապարան համայնքին հատկացվելիք ֆինանսական միջոցները նախորդ տարվա համեմատ ավելացվել է 77.55 հզ դրամով: Հիմք ընդունելով վերոնշված որոշումները.

Ապարան համայնքի ավագանին որոշում է՝

1.Համայնքի ավագանու՝ 24.12.2019թ. N 75-Ն որոշման 1-ին կետով հաստատված եկամուտների գումարը ավելացնել 9377.55 հզ. դրամով.
2.Համայնքի ավագանու՝ 24.12.2019թ. N 75-Ն որոշման 2-րդ կետով հաստատված ծախսերի գումարը ավելացնել 9377.55 հզ. դրամով, այդ թվում 9300.0 հզ դրամ օրենսդիր և գործադիր մարմիններ պետական կառավարման և 77.55 հզ դրամ աշխատակազմի /կադրերի/ գծով ընդհանուր բնույթի ծառայությունների մասով:
3. Համայնքի վարչական բյուջեի պահուստային ֆոնդից 15000.0 հզ դրամ ուղղել անհրաժեշտ կապիտալ ներդրումների և ծախսերի կատարման համար:
4.,,Ապարան համայնքի 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին,, ավագանու 24.12.2019 թ. N 75-Ն որոշման N1 հավելվածում կատարել համապատասխան փոփոխություններ՝ համաձայն NN 1,2,3 և 6 հատվածների:

Ավագանի՝ (կողմ - 10) (դեմ - 0) (ձեռնպահ - 0)

Գեղամյան Խաչիկ
Երեմյան Աղվան
Կարապետյան Արտյոմ
Կարապետյան Ռադիկ
Կարապետյան Էդգար
Մակարյան Վահան
Շահբազյան Հովհաննես
Պետրոսյան Արա
Տոնոյան Մուշեղ
Փարվանյան Արթուր

Համայնքի ղեկավար՝ Կ. Եղիազարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
ՀՀ Արագածոտնի մարզ, ք. Ապարան, Բաղրամյան-26, Հեռ. (0252) 2-43-93
էլ. փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com, կայք՝ www.aparan.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**19 ՄԱՐՏԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ N 19-Ա**

## ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ՝ 23.01.2020Թ. <ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՄԱՎՈՐ /ՍԵՓԱԿԱՆ/ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ> ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ N 03-Ա ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 10 -րդ հոդվածի 10-րդ և 11-րդ մասերով, 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 48-րդ հոդվածով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի դրույթներով.

Ապարան համայնքի ավագանին որոշում է՝

1. Ապարան համայնքի ավագանու՝ 23.01.2020թ. <Ապարան համայնքի ղեկավարի սոցիալական պաշտպանության բնագավառում կամավոր /սեփական/ լիազորությունների իրականացման կարգը> հաստատելու մասին N03-Ա որոշման հավելվածում կատարել փոփոխություն և լրացում:

Ավագանի՝ (կողմ - 10) (դեմ - 0) (ձեռնպահ - 0)

Գեղամյան Խաչիկ
Երեմյան Աղվան
Կարապետյան Արտյոմ
Կարապետյան Ռադիկ
Կարապետյան Էդգար
Մակարյան Վահան
Շահբազյան Հովհաննես
Պետրոսյան Արա
Տոնոյան Մուշեղ
Փարվանյան Արթուր

Համայնքի ղեկավար՝ Կ. Եղիազարյան

ՀԱՎԵԼՎԱԾ

Ապարան համայնքի ավագանու
23.01.2020թ. N 03-Ա որոշման

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ՝
Ապարան համայնքի ավագանու
19.03.2020թ. N 19-Ա որոշմամբ

# Կ Ա Ր Գ

## ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՄԱՎՈՐ /ՍԵՓԱԿԱՆ/ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

